ՀԱՄԻԴ ԱԼԵՄԻ
HAMID ALEMI

ԻՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՖԻՇԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Իրանի նորագույն պատմության մեջ աֆիշների առաջին նախատիպերը կարելի է համարել 150 տարի առաջ կրոնական բովանդակությամբ և կրոնական տարբեր արարողությունների ու միջոցառումների համար պատրաստվող «ազդերը», որոնք պարզ բովանդակություն և տեխնիկա ունեին: Դրանք մեծ մասամբ կազմված էին գեղագրության կամ վայելչագրական ձեռագիր տողերից զարդարված համապատասխան նախշերով և պատրաստվում էին հատուկ պատվիրատուի կամ որևէ հասարակական կրոնական միջոցառման համար: Այդ շրջանում դեռևս Իրանը չուներ գրատպության արհեստը և կինոմատոգրաֆիան: Այս «ազդերը» հիմնականում պարունակում էին գեղագիր տեքստեր և երբեմն նաև որոշ նկարներ, դրանք այքի չէին ընկնում հարուստ գունագարդմամբ, հաճախ իշիտում էր սևն ու սպիտակը, գույները վառ ու պայծառ չէին:

Մինչև տպագրության մեքենայի մուտքը իրանական գրաֆիկի հիմնական ճյուղերն էին գեղագրությունը, պատմվածքների նկարագարդումը, նշանները, գերբերը, նշագրումները և ծաղրանկարները: Տպագրության մուտքն Իրան զուգադիպեց Իրանի սահմանադրական շարժմանը (1900-ական թվականներ), հետևաբար արհեստի այս ճյուղը և նրա ընձեռած հնարավորությունները անմիջապես օգտագործվեցին թե իշխանությունների և թե ընդդիմադիրների կողմից:

20-րդ դարի սկզբին մամուլի հիմնադրմամբ և պրոֆեսիոնալ լրագրության տարածմամբ ասպարեզ եկան առաջին քաղաքական գծագրության գործերը: Սկզբում դրանք ներառում էին միայն մամուլում հրապարակվող քաղաքական ծաղրանկարներ, այնուհետև ընտրությունների քարոզչական արշավներում տպվեցին նախընտրական հայտարարություններ և ազգային ժողովի թեկնածուների գովազդային նկարներ: Սահմանադրական շարժման տարիները քաղաքական քարոզչության և հայտարարությունների բուռն տարածման ժամանակներ էին: Սահմանադրական շարժման փոթորկալի վայրիվերումների ժանամանակ իշխանություններն իրենց պատգամները և հրահանգները ժողովրդին էին փոխանցում պետա-

կան հայտարարությունների և տեղեկագրերի միջոցով, իսկ ընդդիմադիր ուժերը նույն գործն անում էին ընդհատակյա և գաղտնի պայմաններում, պատերին ու հանրային վայրերում գիշերով փակցվող հայտարարությունների միջոցով, որոնք հայտնի դարձան «շաբնամե» (թարգմանաբար նշանակում է «գիշերագիր») անվամբ: Հեղափոխական աշխատանքի այս ձևը Իրանում շատ տարածված էր և կրկնվեց նաև 1979թ. Իրանի Իսլամական հեղափոխության ժամանակ:[1] Բացի նշված հայտարարություններից և գիշերագիրներից, ժամանակի թերթերն ու պարբերականները ևս իրենց էջերում տեղ-տեղ օգտագործում էին գրաֆիկական գործեր: 1946 թ. Իրանում հրատարակվում էին շուրջ 80 թերթեր ու պարբերականներ, որոնցից 50-ը Թեհրանում և 30-ը այլ քաղաքներում:

Քաղաքական աֆիշի կողքին վերելք ապրեցին նաև իրանական ֆիլմարվեստի ազդերն ու աֆիշները, որոնք նպաստեցին քաղաքական աֆիշի հարստացմանն ու զարգացմանը: 1928 թ. Իրանում առաջին անգամ նախագծվեցին ֆիլմի աֆիշներ, որոնց հեղինակներն էին Հայաստանից Իրան գաղթած Մուշեղ և Նապոլեոն Սարվարյան եղբայրները, այնուհետև Շվեդիայից գաղթած Ֆերեդրիկ Թալբերգը աֆիշի ստեղծման գործունեությունը զարգացրեց Իրանում: 1941թ. հետո Թավրիզ և Թեհրան քաղաքների թատերախմբերը իրենց ներկայցումների հայտարարման ու գովազդման համար սկսեցին կիրառել աֆիշի արվեստը: Դրան զուգընթաց, քաղաքական ու քարոզչական տարբեր կազմակերպություններն իրենց քաղաքական տեսակետների, ներկայացման ու տարածման նպատակով ստեղծեցին աֆիշներ: 1958թ. Թեհրանի համալսարանում բացվեց գեղարվեստի ֆակուլտետ և աֆիշի գծագրման առարկան ներառվեց դեկորատիվ արվեստների բուհում: 1960-ական թվականներին Իրանի աֆիշում համադրվում էին գեղանկարչության և գծագրության ավանդական ու մոդեռն ուղղությունները: 60-ական թվականներին ստեղծված աֆիշներն ստեղծվում էին երեք հիմնական ուղղությամբ.[2]

1.Կինոմատոգրաֆիայի և ֆիլմերին առնչվող աֆիշներ, որոնց ամենահայտնի հեղինակներից էր Հայկ Օջախյանը:

2.Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին երկրում և միջազգային մասշտաբում ընթացող քաղաքական գործընթացներն արտալոթող աֆիշներ, որոնց ամենահայտնի հեղինակներից էր Մոհսեն Դոլուն:

---

[1] Լորդ Ջորջ Քերզեն, Իրանը և Իրանի հարցը, թարգմանիչ Մազանդարանի Վ., Առաջին հատոր, Ֆարհանգ հրատարակչություն, Թեհրան, 1990 թ., էջ 607:

[2] Գուդարզի Մ., Իրանի նկարչության պատմությունը սկզբից մինչև արդի դար, սամթ հրատարակչություն, Թեհրան, 2005թ.:

3.Առևտրային ու գովազդային աֆիշներ, որոնք ավելի ամբոխահաճո էին և քիչ թե շատ ազդված արևմտյան զովազդային աֆիշներից:

Հետագայում Փեհլևիների իշխանության օրոք քաղաքական աֆիշները գլխավորապես նախաձեռնվում ու պատրաստվում էին պետության կողմից պետական տոնակատարությունների և քաղաքական իրադարձությունների կապակցությամբ: Այս շրջանում քաղաքական աֆիշը առանձնապես չզարգացավ: Ռասսայական իտրպևանության վերացման և մարդու իրավունքների մասին հրապարակված աֆիշները կրում էին շատ ընդհանրական բնույթ և ուղղակիորեն ուղղված չէին որևէ պետության և վարչակարգի դեմ: Այդպիսի աֆիշներ ստեղծվեցին հատկապես Փեհլևի Երկրորդի օրոք»:[3] Իրանական աֆիշի հայտնի ստեղծագործողներից կարելի է հիշատակել Մոհամմադ Բահրամիին, Հուշանգ Քազեմիին, Մաղեղ Բարիրանին և Մորթեզա Մոմայեզին:

Իրանի քաղաքական աֆիշը Իսլամական հեղափոխությունից հետո

Երկարատև դադարից ու լճացումից հետո 1979 թվականները դարձան իրանական նորագույն գրաֆիկական արվեստի վերելքի տարիներ: Հեղափոխությունից հետո աֆիշները Իրանում ստացան քաղաքական նշանակություն հիմնականում կրելով քարոզչական բնույթ: Հեղափոխության ընթացքում գրաֆիկական արվեստը հասարակական մեծ հնչեղություն և առանձնահատուկ նշանակություն ստացավ արտացոլելով ժամանակի շունչն ու ոգին: «Քաղաքական-հասարակական բուռն զարգացումների և կտրուկ փոփոխությունների պայմաններում աֆիշները հանդես եկան, զանգվածային տեղեկատվության միջոցի դերում: Այս գործընթացը պայմանավորված էր ոչ միայն երկրում կատարվող քաղաքական փոփոխություններով, այլև տնտեսության կասեցումով: Հեղափոխության, հատկապես, Իրաքի կողմից Իրանին պարտադրված ութամյա պատերազմի հետևանքով, խիստ կրճատվեց սպառողական մի շարք ապարանքատեսակների պահանջարկը և երկրում տիրեց տնտեսական խնայողության քաղաքականություն, կրճատվեց այդ ապրանքատեսակների արտադրությունն ու հետևաբար մրցակցությունը»[4]: Կարելի է ասել, աֆիշը տնտեսական գովազդային ոլորտում նորընթաց սպրեց: Դրա փոխարեն հարստանում էր աֆիշի մշակութային բովանդակությունը, քաղաքական գործառույթը և քարոզչական նշանակությունը: «Քաղաքական աֆիշի բնազավառում ստեղծագործող արվեստագետները հանդես եկան տարբեր ժանրերով (ծաղրանկար, աֆիշ, կազմ և այլն): Նրանք ներշնչվելով սյուռեալիստական

---

[3] Մորադինաբի Հ., Ֆիլմի աֆիշները հեղափոխությունից հետո. Շահեղ համալսարան. Թեհրան, 2004 թ.

[4] Ղոիլզադեհ Ա., Քաղաքական գծագրություն. Թեհրանի համալսարան, Թեհրան, 2001 թ.

դպրոցից և, կիրառելով կոլաժի ու աբստրակտ ոճի տարբեր տեխնիկաներ, կարողացան ձևավորել իրենց ինքնուրույն մոտեցումները:

Իրանի Իսլամական հեղափոխությունից հետո քաղաքական ամենատարբեր թեմաների շուրջ ստեղծվեցին աֆիշներ, որոնց մեջ հաճախ զրվում էին կարգախոսներ և տեղադրվում կրոնական առաջնորդների, հատկապես Իմամ Խոմեյնիի դիմանկարները: Գրաֆիկայի արվեստագետները փորձում էին նոր ձևեր գտնել նոր իրադրությունն ու սեփական խոսքը արտահայտելու համար»:[5] «Հեղափոխության ալիքը նոր էր սկսվել, երբ ի հայտ եկան հակաշահական առաջին հայտարարություններն ու թռուցիկները: Սովորական ոչ մասնագետ հեղինակների ձեռքով պատրաստված տրակտներն ու բյուլետենները հետհեղափոխական Իրանի 1-ին քաղաքական գրաֆիկական գործերն էին, որոնց մեջ երբեմն նկատվում էին քիչ թե շատ գեղարվեստական արժեք ներկայացնող աշխատանքներ: Դրանք գեղարվեստի ինստիտուտներում սովորող ուսանողների գործեր էին: Ինչքան թափ էր ստանում հեղափոխության զանգվածային ալիքը և փողոցներում տեղի էին ունենում միլիոնանոց ցույցեր ու երթեր, այնքան շատանում էին թռուցիկները, գրքույկները և բյուլետենները, որոնք պատրաստում էին ոչ մասնագետ մարդկիկ կիրառելով պարզ տեխնիկա: Ձեռքով պատրաստված բազմաթիվ այդ պրակների մեջ կային անանուն արվեստագետների կողմից պատրաստված գործեր, ովքեր երկրում տիրող քաղաքական-ոստիկանական ճնշումների պատճառով գերադասում էին չհրապարակել իրենց անունները: Տպարանների և հրատարակչությունների վրա գործադրվող խիստ գրաքննության պատճառով այդ պրակներն ու գրքույկները հրատարակվում էին ձեռքի աշխատանքով: Քաղաքական աֆիշներն այդ շրջանում փոխանցում էին պարզ և ուղղակի պատգամներ հեռու մնալով փոխաբերական կամ խորհրդանշական իմաստներից: Ժամանակի պահանջն էր դա, և դրանք ավելի մեծ հաջողություն էին ունենում:

«Հեղափոխությանը հաջորդած առաջին մի քանի տարիները հագեցված էին բազմաթիվ ու տարատեսակ իրադարձություններով, տոնակատարություններով, տարելիցներով, միջոցառումներով, դասախոսություններով, համազումարներով, զոհվածների հուշ-երեկոներով և այլ արարողություններով, որոնք անսպառ նյութ էին մատակարարում գրաֆիկ արվեստագետներին նրանց ընձեռելով սեփական ձիրքը դրսևորելու հիանալի առիթներ և հեղափոխության պատգամները նկարների խուտուն լեզվով հաղորդելու հնարավորություն»:[6]

---

[5] Ֆարրոխյար Ն., Գծագրության արվեստը հասարակական փոփոխությունների գորընթացում, Գրաֆիկի ամսագիր, 11-րդ տարի. 39-40 համար, 2002 թ.

[6] Ղոլիզադեհ Ա., Քաղաքական գծագրություն, Թեհրանի համալսարան, Թեհրան, 2001 թ.:

«1979 թվականի ձմռանը իսլամական հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո, Թեհրանի գեղարվեստի համալսարանում ուսանողների ջանքերով կայացավ քաղաքական աֆիշների առաջին ցուցահանդեսը, որն անանախադեպ ու անսպասելի ընդունելության արժանացավ հանրության լայն շրջանակների կողմից: Այնուհետև հանրակրթական դպրոցներում ևս մեկը մյուսի հետևից բացվեցին նման ցուցահանդեսներ, որոնք ևս ժողովրդի ջերմ ընդունելությանը արժանացան:

Աֆիշի արվեստը ծառայեց հեղափոխության արվեստին: Այդ պատճառով քաղաքական խմբերը կազմակերպեցին տարբեր ցուցահանդեսներ: Քանի որ չկար աֆիշի արվեստի բավականաչափ փորձ ու անցյալ, այս խմբերը սկզբում ընդօրինակեցին սոցիալիստական երկրների փորձը, սակայն հետագայում նրանք (հատկապես իսլամական ուժերը) ձևավորեցին իրենց սեփական ոճը և իրենց գործերում ներդրեցին ավանդական-կրոնական տարրեր: Հետաքրքիր այն է, որ հետհեղափոխական առաջին տարիների աֆիշներում ակնհայտորեն երևում էր նախահեղափոխական մշակութային աֆիշների հետքերը և գեղարվեստի համալսարանում ուսուցված ոճերի ու դպրոցների ազդեցությունը»: [7]

Այսպիսով նոր էջ բացվեց Իրանի գրաֆիկական արվեստի պատմության մեջ և ձևավորվեց Իսլամական հեղափոխության գրաֆիկական արվեստը: Մեծ զարգացում ապրեցին գրաֆիկական արվեստի տարբեր ճյուղերը աֆիշը, ծաղրանկարը, նամակադրոշմները, գրքերի և պարբերականների ձևավորումը, զինանշանները,գերբերը, թղթե դրամների գծագրումը և այլն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Աբրահամյան Երվանդ, Իրանը երկու հեղափոխության միջև, թարգմանիչ Ֆիրուզմանդ Ք., Մարքազ հրատարակչություն, Թեհրան, 1998թ.:

2.Գուդարզի Մ., Իրանի նկարչության պատմությունը սկզբից մինչև արդի դարը, Սամթ հրատարակչություն, Թեհրան, 2005 թ.:

3.Զարաբի Իսֆահանի Ա., Իրանի մանկական աֆիշների տեխնիկաները և արտահայտչաձևերը, Շահեդ համալսարան, 2007 թ.

4.Լորդ Ջորջ Քեռզեն, Իրանը և Իրանի հարցը, թարգմանիչ Մազանդարանի Վ., Առաջին հատոր, Ֆարհանգ հրատարակչություն, Թեհրան, 1990 թ., էջ 607:

5.Ղոիլզադեհ Ա., Քաղաքական գծագրություն, Թեհրանի համալսարան, Թեհրան, 2001 թ.

6.Մորաղիսաբի Հ., Ֆիլմի աֆիշները հեղափոխությունից հետո, Շահեդ համալսարան, Թեհրան, 2004 թ.:

7.Ֆարրոխյար Ն., Գծագրության արվեստը հասարակական փոփոխությունների գործընթացում, Գրաֆիկայի ամսագիր, 11-րդ տարի, 39-40 համար, 2002 թ.

---

[7] Զարաբի Իսֆահանի Ա., Իրանի մանկական աֆիշների տեխնիկաները և արտահայտչաձևերը, Շահեդ համալսարան, 2007 թ.